

Թեան գաղափարը և դրան սերտ միացած մարդկային համաշխարհային եղբայրութեան իդէալը, որի իրագործուիլը չէր սպասում ոչ կրօնական արտաքին գաւառանքներից, ոչ քաղաքական հիմնարկութիւններից, այլ հոգութեան բարձրութիւնից, որ պիտի կատարուի քրիստոնէութեան ազդեցութեամբ, նա խորը համոզուած էր, որ երկրում ամէն բան աւելի լաւ կլինի երբ մենք ինքներս աւելի լաւ լինինք: Այդ համոզումը լուսաւորում էր նորա կենաց ճանապարհը: միութարում էր Պարկերին նոյն իսկ մահուան սառն բազուկների մէջ: Մահուան տագնապի մօտ նա իւր անձը երկսի բաժանուած էր տեսնում: Մինչդեռ մի Պարկերը մեռնում էր Փլորենցիայում, միւսը ապրում էր Ամերիկայում և շարունակում առաջնի գործը:

Պարկերի ցանած մարդասիրական և բարոյական սերմերը բազմաթիւ են. նորա գաղափարներից շատերը իրականութիւն են դրտել, շատերը մոռացուել իրր կեանքի պայմանաւոր ընթացիկ երեւոյթ, բայց կայ մի գաղափար, որի իրագործումը ապագայ սերնդի գործ է և նորա մարդասիրական սկզբունքների պսակը՝ մարդկային ազգի եղբայրութեան գաղափարը: Նա իւր կենդանութեան տարիներում քիչ չի աշխատել այդ գաղափարի յարթանակելու յաջողութեան համար: Ուրովհետեւ ամենից մեծ արդելք նպատակին հասնելու համար ազգայնութեան գաղափարն էր, ուստի Պարկերը գործ դրեց իւր հոգու բոլոր ուժերը այդ խնդրում: Թէ Պարկեր որքան համոզուած աշխատում էր այս գործի համար, երեւում է այն համեմատութիւնից, որ մէջ է բերում իւր թղթերից մէկի մէջ՝ «Անգլո — Գաղղիական պատերազմում Վերա — Կրօսի մօտով անցնում էր գիշերը ուշ անդլիական պատերազմական մի նաւ: Քաղաքին մօտենալիս նա նկատեց մի ահագին սև բան. թէ նաւապետը և թէ նաւաստիները կարծեցին, որ այդ թշնամու նաւն է: Անգլիացիք ձայն տուին. ոչ մի պատասխան չտացան. լուսութիւնն աւելացրեց նոցա կասկածը, և դառի երկիւղով բռնուած՝ նաւապետը հրամայեց ռմբակոծել թշնամուն: Ռմբակոծումը շարունակուեց ամբողջ գիշերը. սուլում

էին գնդակները և տրաքուում, բայց սև բաւը լուռ էր ըստ առաջնոյն: Լուսարացին միոյն տեսան անդլիացիք, թէ որքան տկար ու ապարդիւն էր նոցա ջանքը, նոքա կռուում էին մի ահագին որձաքար ժայռի դէմ: Այսպէս է և բարոյականութեան սահմանում: կան ժայռի նման հաստատուն ճշմարտութիւններ, որոց առաջ ուշ թէ շուտ պիտի խորտակուին մարդու ևսական ձգտումները: Կծագի արեգական ճառագայթը և մարդիկ կտեսնեն, որ ունայն էր նոցա ճշմարտութիւնը՝ խաթարելու ջանքը, նա հաստատուն է առաջուայ նման և ոչ մի յարձակմունքից չի վախենում: — Եւ թէ ոգորոս Պարկեր մի ողբերում քարոզ է այդ ճշմարտութեան, կենաց ծովի ալիքներից ելած. նա մի կարապետ էր մարդկութեան բարեկամների այն տենչանօք փափագած օրուայ, երբ կանխադասանան ազգային նախապաշարմունքներն ու ցեղական հակակրօնութիւնները եւ երբ մարդիկ իրար եղբայր կհամարուին:»

Ս. Յ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔԱՅ ԵԿԵՂԵՑԻ:

Հանգուցեալ Թագաժառանգ Մեծ Իշխան Գէորգէ Ալէքսանդրովիչ մարմինը յուլիս 6-ին պալատից եկեղեցի տարուեցաւ և յաջորդ օրը բերուեցաւ Բորժոմ, որտեղից Բաթումի և Նովորոսիյիտի վերայով Պետերբուրգ պէտք է փոխադրուէր: Թագաժառանգի գաղաղին ուղեկցում էր Աբասթումանից Մեծ Իշխան Նիկոլայ Միխայիլովիչ, իսկ Բաթումում հանդիպեցին Պետերբուրգից եկած Մայր Կայրուհի Մարիա Ֆէոդորովնա, Օդոտափառ եղբայրը՝ այժմեան Թագաժառանգ Միխայիլ Ալէքսանդրովիչ, Օդոտափառ քոյրերը՝ Կսէնիա և Օլգա Ալէքսանդրովնա, Մեծ իշխաններ Ալէքսէյ Ալէքսանդրովիչ և Ալէքսանդր Միխայիլովիչ: Ողբացեալ Արքայազնին վերջին յարգը մատուցանելու համար ճանապարհին ամէն տեղ խուռն բազմութիւն զիմարում էր գաղաղը տանող մասնաւոր դր-

* Յան. Բաղում «Книжка Нед.» 1899 май, համարից:

նացքին: զայն էին հոգեւորականութեան բարձր ներկայացուցիչներ և հոգեհանդիսանք կատարում: Առանձին հանդիսութեամբ հոգեհանդիս կատարեց Մոսկւայում Սրբ. մեառապօլիտ Վլադիմիր իւր եկեղեցականներով: Կուսկովօ կայարանում տնուր գնացքի հանդէպ եկաւ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը և ուղեկցեց մինչև Պետերբուրգ: ուր հասան յուլի 12 առաւօտեան: Այտեղ Սրբ. Անտոնիյ մեառապօլիտը հանգստեան կարգ կատարեց: ապա Թագաւոր Կայսրը և մեծ իշխանները վերջին դադարը շոգեկառքից և տեղափոխեցին նախապէս պատրաստուած ողակիր կառքի վերայ: որ Կայսերական տան անդամներն: պալատականներն: ների: քաղաքական և զինուորական բարձրաստիճան անձանց ուղեկցութեամբ յառաջ ընթացաւ դէպի Պետրոպօլիսի բերդը: Ճանապարհի երկու կողմը զօրքեր էին կանգնեցրած և ահագին բազմութիւն ժողովրդեան լուռ երկիւղածութեամբ հանդիսատես էր: Պետրոպօլիսի մօլը տաճարում: որ Կայսերական տան անդամների հանգրժարանն է: դադարը մնաց մինչև յուլի 14-ը: Վերջին գիշերը շարունակ տաճարը լի էր ազօթողների խուռն բաղմութեամբ: որ պարագէր համարել սիրեցեալ Արքայադստի Նշխարներն իւր յարգը մատուցանել: Թաղումը տեղի ունեցաւ յուլի 14-ին Թագաւոր Կայսեր, Մայր Կայսրուհու: Կայսերական տան բոլոր անդամների և բաղմութիւն բարձրաստիճան անձանց և օտար պետութեանց ղեկավարների կամ արտաքոյ կարգի պատգամաւորների ներկայութեամբ: Պատարագ մատուց և թաղման կարգը կատարեց Սրբ. մեառապօլիտ Անտոնիյ: Գաղաղը դամբարանի մօտ տարան Թագաւոր Կայսրը ու Մեծ իշխանները: Գուրը: գետի միւս կողմում անհամար բաղմութիւն ազօթում էր պատարագի միջոցին: և երբ թնդանօթների զգրը: դիւնով և սոյոյ զբօշակի փոխարէն սովորական գրօշակ բարձրացնելով նշան տրուեցաւ: թէ ամէն ինչ վերջացել է: ամբողջ բաղմութիւնն իբրեւ մի մարդ ծունկ չողեց կանգնած տեղում: Ռուսաւորանի բոլոր քաղաքներում: ինչպէս և Արտասահմանում շատ տեղեր թէ թաղումից առաջ և թէ յետոյ հանդիսաւոր հոգեհանդիսանք կատարուեցան: և օտար պետութեանց իշխանաւորներն ինչպէս սեփական հաւատարիմ հպատակները շատպեցին իրենց վշտակցութիւնը յայտնել Կայսերական ընտանիքին:

— Կայսերական հրովարտակով Թագաթաւանդ է նշանակուած Նորին Մեծութեան կրտսեր եղբայր Միխայիլ Ալեքսանդրովիչ: որ այժմ 21 տարեկան է:—մինչև Նախախնամութեան հաճոյ կէնի արտ զաւակ պարգևել Նոյն Մեծութեանց:

— Յունիս 27-ին կիրակէ Պետերհոֆի մեծ պալատի եկեղեցում տեղի ունեցաւ Նոյն Կայսերական Մեծութեանց նորածին զոտեր Մեծ Իշխանուհի Մարիայի մկրտութիւնը:

Օգթողոքս ասորի 11 մեառապօլիտների ժողովը: որ ահա 15 ամսից ի վեր Գամառնում գրադուած է նոր պատրիարքի ընտրութեան հարցով: վճռեց վերջապէս պատրիարք ընտրել Ղաւոզիկէի մեառապօլիտ Մեղետիոսին: Բայց որովհետեւ Մեղետիոս ասորի է ազգաւ: իսկ արդէն մէկ ու կէս դար Անտիոքի պատրիարքական աթոռի վերայ նստողները միշտ յայնքեր են եղել: ուստի յայն կղերականութիւնը խիստ դժգոհ է այդ ընտրութիւնից և ամէն միջոց գործ է դնում: որ Սուլթանը չհաստատէ այն: Միւս կողմից ասորի ազգաբնակիւթիւնը որդեւ է բոլոր այժով պաշտպանել իւր իրաւունքները:

— Ասորիքում ուսաց ազգեցութիւնը զընալով զօրանում է. մանաւանդ «Պաղեստինեան ընկերութիւնը» եռանդուն զործունէութիւն է ցոյց տալիս: Թէ որչափ համակրութիւն են վայելում այդտեղ աւսանքներ երեսաց ապրիլ 23-ին Կայսր Ալեքսանդր Բ. նախ Քէյրութում եղած սրտագին ընդունելութիւնից: Ի միջի այլոց նախ վերայ եկաւ և պատուով ընդունուեցաւ Ալեքանունի մեառապօլիտ Գաբրիէլ:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ:

Ինչպէս С. Пет. Вѣдомости թերթը նկարագրում է: վերջին ժամանակ Սպանիայում տեղի ունեցած յուղմանց միջոցին ժողովրդի մէջ նկատելի էր խիստ թշնամական վերաբերում դէպի կղերական հաստատութիւնները: մանաւանդ դէպի եղուիաները: Վերջիններս մի քանի տեղ ստիպուած էին ոտականութեան պաշտպանութեան դիմել: Իսկապէս սպանական օրէնքներով նոքա հալածուած պէտք է լինէին երկրից. բայց նոքա միւս էին այն պատրուակով: թէ պէտք է ընծայեալներ պատրաստեն կղերների վերայ աշխատող միջոնարական ընկերութեանց համար: և խառնուում էին երկրի բոլոր գործերի մէջ: ընդարձակ վաճառականական ձեռնարկութիւններ էին անում: Այժմ: երբ կղերները ձեռքից ելեր են և ժողովուրդը բոս երևութիւն սկսել է հասկանալ: թէ իւր գլխին եկած դժբաղդութեանց մէջ որչափ մասն ունի կաթոլիկ կղերը: Եղուիաները խիստ հնարակաւ պէտք է լինեն: որ մի նոր միջոց դանեն նեղ զրութիւնից ելնելու համար: Նոցա երկու զն ամէնից աւելի Կարդոսեան կուսակցութիւնից է: որովհետեւ եթէ յաջողութիւն

Կարգաւոր ըստարձակ միապետութիւն հաստատել Սպանիայում՝ եղու իսկներն հալածելու օրէնքը կրկին իւր ոյժը կտանայ: Այդ պատճառով սոքա ամէն կերպ աշխատում են այժմեան կառավարութեան եղանակը պահպանել: Նոցա գեներալը Հռոմում Սպանացի է և Վատիկանի քաղաքականութիւնը չըջնէ կարող է որ կողմը կամենայ: Իսկ բուն Սպանիայում նոցա ազդեցութիւնն այնչափ մեծ է, որ կարող են ոչ մի բանով յայտնի չկած մարդոց մինչև նախարարի ատենան բարձրացնել: Հետեւեալն այն է, որ հակահեղեղական շարժումը զօրանալով հետզհետեւ Ժողովրդի բոլոր դասակարգերն մէջ՝ ուղղուած է միեւնոյն Ժամանակ իշխանական տան դէմ, և եղու իսկներն անկումը իւր հետ պէտք է բերէ նաև իշխանաւորութեան փոխանութիւն կամ փոխադարձ:

— Իտալիայում եկեղեցական և աշխարհական կառավարութեանց մէջ եղած թշնամական յարաբերութեան մի տխուր հետեւեալը զգացուած է պատկի խնդրում: Իտալիան ինչպէս և եւրոպական միւս երկրները միայն քաղաքական կարգով կնքուած ամուսնութիւնն է ճանաչում օրինաւոր: Իսկ եկեղեցին խտիւ պահանջում է, որ առանց եկեղեցական խորհրդի կատարուած ամէն ամուսնութիւն խտելի համարուի: Եթէ աւելի մի քանիսն զոյգ պրոտեստուած է եկեղեցում, առանց նախապէս քաղաքական կարգը կատարելու՝ ամուսնիններից մէկը կարող է մի օր առանց այլեւայլութեան ձգել միւսին: և պատահականաւ չի համարուի կառավարութեան առաջ. այդպիսի դէպքեր շատ են պատահում և բարոյական զեղծման պատճառ լինում:

— Նորերս սովորական շքեղ հանդիսով Վատիկանում կարգեալի կարմիր գլխարկն ստացան հինգ արքեպիսկոպոսներ և մի ֆրանցիսկեան կրօնաւոր: Երբ պոպը իւր շքամբով շրջապատաւորուած ներս բերուեցաւ արարողութեան դահլիճը՝ ներկայ եղող պատուաւոր հիւրերի բաղմունքիւնը ընդունեց նորան բուն ոգևորուած ծափահարութիւններով: — Այսպէս պապացուներ մեռնում են և նորերը նոցա տեղն են գալիս: Բայց հինաւորը ձերտնին գեա պիտի նստած է իւր աթոռի վերայ:

— Հանդիսեալ Աղտրեան պատրիարքի տեղ հայ հռոմէականաց Ս. Պօլոս պատրիարք է ընտրուած Իէրզեան կաթողիկոսը:

ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ (Jean) ՌԵՍԻՆԻ ԵՐԿԵՐԻՒՐԸ
ԸՄԵԼԿԸ:

Ապրիլի 23-ին Ֆրանսիայում Յովհ. Ռասինի համար երկերի բամբակ կատարեցին մեծ հան-

դիսով: Լուդովիկոս ԺԳ-ի սիրելի բանաստեղծի այս հանդէսը կրօնական բնաւորութիւն ստացաւ: շնորհիւ կաթողիկէ եկեղեցու ներկայացուցիչներ: Այս առաջին և չափնուած մի երևոյթ էր, որ եկեղեցին պատուում էր մի հեղինակի, որ իւր ամբողջ ապրանքը զօրծ է գրել թատրոնական ապարիկում:

Հանդէսը կատարուեց Ռասինի հայրենի քաղաքում, Փերա Միլանում, որ ամբողջ զարդարած էր կանաչով, դրօշակներով և վահաններով: Նստը — Դամոս մ հոգեհանգիստ կատարուեց Սուսանի կաթողիկոս Ռամէկուրի ներկայութեամբ, որ պատճառ էր եղել հանգիսի կազմուելուն: Հոգեհանգստից յետոյ Փարիզի քահանայ Պիէր Վիլես մի ճառ խօսեց, դառնալով նաև դէպի Comédie Française-ի գերատանները: Իւր ներկայացուցիչներ դատական թատրոնի:

Հասերին սարօրինակ կերեալ, առաջ նա օր եկեղեցին ցանկացաւ մասնակցել մի մարդու երկհարիւրամեակը պատուելու, որ ամբողջ կեանքը նուիրել էր թատրոնին: Բայց հանճարեղ բանաստեղծի բոլոր հեղինակութիւնները, ամենից անշնաններն անգամ միշտ մխուած են քրիստոնէական մարդասիրական և խիստ բարոյական գաղափարներով, և եկեղեցու պարագն է յիշել նորա ծառայութիւնները:

Յետոյ նա ցոյց տուաւ Ռասինի ապանդի բնորոշ դժերը և կանգ առաւ երկար այն ազդեցութեան վերայ, որ հանգուցեալն ունեցել է գրականութեան նկատմամբ: Մինչև իսկ համեմատեց Էնկոպլիի հետ՝ հարկաւ նախապատիւ համարելով իւր հայրենակցին: Ճառը խորին տրպաւորութիւն թողեց ունիւղիւրների վերայ:

Յետոյ Սուսանի կաթողիկոսը շնորհակալութիւն յայտնեց հանգիսի մասնակցողներին, որ սիրով ընդունել էին իւր հրաւերը: Սրանով և վերջացաւ եկեղեցական հանդէսը:

Երեկոյան Ս. Բ. ի գերատանները ներկայացրին Գանգատաւորների երրորդ՝ և Վերսիկայից երկրորդ և չորրորդ դործողութիւնները: Յաջորդութիւնը կատարեալ էր, որով մի անգամ ևս ապացուցուեց, որ ապանդի արդիւնքը չի մաշուի և չի հնանալ:

ԲՈՂՈՒՅԵԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Գեմանիա.

Կանանց շարժումն այնչափ ընդարձակութիւն է ստացել Գերմանիայում, որ այս տարուան գրեթէ բոլոր աւետարանական մեծ Ժողովներում պահանջ է զգացուել մի օրոշ տեղ տալ կանանց խնդրոյն: Այդ բաւական չէ, յունիս 5-7-ին դումարուեցաւ Կատիլ քաղաքում Վալե-

տարանական կանանց՝ մի առանձին ժողով՝ որի կազմակերպողն է քրիստոնէական—համայնական աշխիւ ընկնող գործիչներէն մէկը լինց. Վերէր և որի նպատակն է քրիստոնէական—աւետարանական ոգի մտցնել կանանց շարժման մէջ՝ հակառակ ընդհանուր հասանքին՝ որ դաւանութիւններէ անխտրութիւն է պահանջում։ Այս ժողովին մասնակցում են գլխաւորապէս պահպանողական շրջաններին պատկանող կանայք։ Երանգ մի մշտական դաշնակցութիւն են կազմել և կենտրոն ունենալով Պասսէլ քաղաքը՝ պէտք է աշխատեն երկրի զանազան կողմերում՝ բնկերութիւններ կազմել, կրօնական—քարոյշական կրթութեան նըպատող հաստատութիւններ հիմնել, անպաշտպան կանանց տեղի պաշտօնի գրամական օժանդակութիւն և լին ընձեռել։ Բաւական է այստեղ ժողովի մէջ կարգացում ատենախօսութիւններէ մասին համառօտակի յիշել, որպէս զի կարելի լինի մի դադարի կողմէլ նորան առաջնորդող սկզբունքների և զբաղեցնող հարցերի մասին։ Տիկին Աւֆէր և տիկին Մուդհէնի խօսեցին կանանց շրջաններում կրօնական եռանդ զարթնեցնելու մասին՝ այդ նպատակաւ ցայժմ կատարուած աշխատանքին վերաբերեալ հետաքրքրական տեղեկութիւններ հաղորդելով, վերջինի խօսքը մասնաւորապէս քարոյշական անկման դատապարտում և կանանց ազատելու մասին էր, որ լրացրեց պատուր Էրայէր՝ նկարագրելով այդ նպատակի համար կազմուած ապաստանարանների գործունէութիւնը։ Ապա Ռդելլից բնակիչներէ շարաշար գործածութեան դէմ մարտող զերմ, բնկերութեան գործավար Իւստ մի ոգևորուած ատենախօսութեամբ համոզեց Պանանց դաշնակցութեան ամբողջ մարմնով անդամ դրուել այդ բնկերութեան։ Տիկին զր. Էնդէն նկարագրեց աղքատների խնամատարութեան գործը եկեղեցական և մասնաւոր միջոցներով և աշխատեց ցոյց տալ, թէ որչափ մեծ նշանակութիւն կարող է ունենալ կանանց գործակցութիւնն այստեղ։ Լեյ. Վերէր խօսեց կանանց զանազան արուեստների միջոցաւ որոշ կոչման պատրաստելու մասին։ Պատուր Սարգեման մի ընդարձակ ճառով կանանց հիւսնդներ խնամելու մասում ունեցած գործունէութիւնը պարզեց, Օր. Մեկկէ նիւթ էր բնարել «Աւետարանական սարկաւազութիւնների բնկերութեան» նպատակն ու անելիքը կանանց հարցը վճռելու համար բարձր և ժողովրդական շրջաններում։ Ամէնից հետաքրքրականն և ուշագրաւն էր Օր. Ա. Ֆէօրտէրի ատենախօսութիւնը, որ եռանդուն խօսքերով ցոյց տուաւ, թէ որչափ ստիպողական է կանանց տնտեսութեան, անային շինարարութեան համար կրթելու պահանջը։ Օրիորդէ Զանքով արդէն Պասսէլում կարգա-

դրուած է, որ ժողովրդական դպրոցների համար ուսուցչուհի պատրաստողներին վերջին տարին անային շինարարութեան դասեր են աւանդուին. այդ դասերը մեծ յաջողութիւն են ունեցել և ակներև կրթիչ ազդեցութիւն ցոյց տուել։ Վերջապէս օր. Փոն Ալօսանէր խօսեց «Աարժուհիների կոչման և այն աւելի զարգացնելու» մասին։ Այսպիսով ժողովը շատ բազմակողմանի և հարուստ նիւթ բնծայեց խորհրդածութեան և մշակութեան համար, հիւրերը հեռացան գոհ սրտով և համոզուած, որ յիշաւ այս դաշնակցութիւնը կարող է «աւետարանական հիմքի վերայ համայնական խնդրի օժանդակութեան համար կրթարան» դառնալ, ինչպէս նորա նախագահ օր. Մուդհէն ասաց ժողովի սկզբում։

— Գերմանիայում այժմ 44 զանազան կարգի ապաստանարաններ կան կանանց համար, որոնց մէջ 141 սարկաւազուհիներ և 77 ազատ քոյրեր են աշխատում։ Մի տարուայ ընթացքում աւելի քան 24,000 անձինք մտել ելել ու խնամք են գտել այս ապաստանարաններում։

Անգլիա.

Միտական շարժումը գնալով դեռ զօրանում է այստեղ և ամենօրեայ ժողովների ճառախօսութիւնների, վիճարանութիւնների, լրագրական բանավարութիւնների առարկայ է։ Թէև հարցը արտաքին արարողութիւններէն է սկսուել, բայց իրօք աւելի խոր էական սկզբունքներ է շօշափում և պատում է մի քանի կէտերի շուրջ, ինչպէս՝ քահանայութիւն, խորհուրդ, խոստովանութիւն։ Առանձին ուշադրութեան արժանի են այս նկատմամբ Թայմզ թերթում տպուած անունի Ալլիամ Հարկուրի նամակները, որ վերջին ժամանակ ազատամիտների զեկավարն էր ստորին պաշտառում։ Լինելով հակաժողովականների կողմնակից նա իւր բանակիւնն ուղղում է զբլխատրապէս եպիսկոպոսների ինքնազուխ կերպով թոյլ տուած նորմութիւնների դէմ, որոնց մէջ օրինագանցութիւն և կղերական ոտնձգութիւն է տեսնում. ուստի առաջարկում է ա) որ եպիսկոպոս լինին այսուհետեւ նորա միայն, որոնք պարտաւորուած են ճիշտ օրէնքի համաձայն կառավարել իրենց թեմը. բ) որ հակառակ օրինաց ձէտեր կատարող եկեղեցականները պաշտօնից զրկուին, իոխանակ պատժուելու, որ նոցա մի տեսակ նահատակ է դարձնում։—Հակաժողովականների կազմած բազմաթիւ ժողովներից նշանաւոր է մանաւանդ յունուար 31-ի ժողովը Լոնդոնի Ալքերտան դահլիճում, որին 10,000 հոգի մասնակցում էին և 5000-ից աւելի տեղ չլինելու պատճառաւ դուրսը մնացին։